ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 30 հոկտեմբեր 2007 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին
դատական կազմը
Նախագահությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի և Ֆ. Թոխյանի

Քննության առնելով «Անիվ» հիմնադրամի գործադիր տնօրեն Հայկ Մինասյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

«Անիվ» հիմնադրամի գործադիր տնօրեն Հայկ Մինասյանը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը «..., նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ բառակապակցության մասով և 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Գործում առկա է պետական տուրքի վճարման անդորրագիրը: Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, Սահմանադարական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

«Անիվ» հիմնադրամի գործադիր տնօրեն Հայկ Մինասյանի դիմումը ՀՀ Սահմանադրական դատարան՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը «..., նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ բառակապակցության մասով և 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ԲՈՒԹՅՈՒՆ